# ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՀԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆՑ

## 1643
### ԹՈՒԱԿԱՆԻՆ ՏՊԱԳՐԵԱԼՔ

**1. ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ.— (Ա. Տպգր.)**

*(Տպագրեալ ի Վենետիկ. ի Տպարանի Սալիգաթայի։)*

*Ճակատը.— «ՏԵԱՌՆ ՆԵՐՍԷՍԻ Հայոց Կաթուղիկոսի Նուէր մաղթանաց Ներշափական տաղիւ, ողբումն հնծութեան. 'ի խորոց սրտէ խօսք ընդ Այ։»*

*Յիշատակարանը.— «Փառք... որ եւ կարողութիւն նուաստ եւ տառապեալ անձին իմոյ Յոհաննէս Անկիւրեցւոյ թարգմանչի որ մականուն քստ հռոմայեցոց ձիւանի Մօլինօ ասի, հասանել ի յաւարտ տպագրութե արհեստիս զոր բազում ջանիւք եւ շատ նեղութբ աքնեալ եւ աշխատեալ այս գ. ամ է զոր կախեալ կամ վս տպագրութե արհեստիս ապաւինելով 'ի յոյսն ամենեցուն 'ի Քս Այ եւ 'ի շնորհաբաշխ Հոգին Սբ. բարեխաւսութբ Սրբոհոյ Ածածնին եւ աղօթիւք սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին, եւ բարեխօսութբ ընտրեալ անօթոյն եւ առաքելոյն Պօղսի։ Եղի 'ի մտի զտպագրութե արհեստն առ 'ի պայծառութիւն ազգիս հայոց, այլ եւ պատճառ աշխատանաց մերոց այս էր. զի Յուրհայեցի Սրապիոն Կաթուղիկոսն բազում փափաք ունէր վս տպագրութե արհեստիս եւ ոչ եղեւ հասու.։ Նա եւ ես պատուէր աշակերտին իւրոյ տր Գրիգոր քաջ րաբունապետին Կեսարիոյ լինի եթէ դու կարողանաս տպագրութե արհեստի եւ նայ եւս ոչ կարողացաւ, Իսկ նա ինձ մեղաւորիս եւ անարժանիս իբր հարկս ի վր եդեալ պատուիրէր ինձ հանապազ եթէ լինի զ'ու կարողանաս. վս զի իմ ծանօթութի կայր ընդ ազգիս ֆռանկաց եթէ կարգալով եւ եթէ լեզաւ. այսպէս յանձին կալեալ ջան եդի աղօթիւք նց. Զոր եւ պարգեւատուն ամենեցուն Քս պարգեւեաց 'ի ձեռին իմոյ զայս չափն առ 'ի պայծառութի մանկանց սրբոյ եկեղեցւոյ ի տանս հայոց. Զոր եւ հասի յաւարտ քստ ձերում աղօթիւք. Իսկ եթէ նուաղութի զտանէք ներեցէք իմում պակասութեա զի կար մեր այս էր։ Արդ եղեւ կատարումն եւ աւարտումն երջանիկ Տն Ներսէսի Հայոց Կթղիկոսին, զոր անուանեալ կոչի ըս ուղիկ. ի Հաւ եւ յընտիր յօրինակէ բազում քննութբ եւ ճառուղարանելով. 'Ի թվականիս հայոց հազար եւ ՂԲ. 'Ի հայրապետութեն հայոց Տն Փիլիպպոսի սրբազան Կթղկսի. 'Ի վայելուչ եւ գեղեցկաշէն կղզիս Վանատիկոյ. Եւ յիշխանութեն նորին քաղաքի Փրանկէսկոս Էրիցոյ դուքի, եւ մեծամեծաց հրամանաւ եւ բրվիլէճով։ Դարձեալ աղաչեմ զձեզ որք հանդիպիք սմայ*

digitised by A.R.A.R.@

կարդալով կամ օրինակելով՝ Յիշեցէք ի Քս զնուաստ յոգի Յոհաննէս Անկիւրացի , եւ զծնօղսն իմ զՄուրատ սարկաւագն եւ զՓաշամելիքն, եւ զդեռաբոյս զաւակքն իմ զՄիքայէլն եւ զԳաբրիէլն եւ զայլ ամ ար-եան մերձաւորսն իմ....։ Դձլ յիշեցէք 'ի Քս զբժիշկապետն զՅովսէփոս Արօմաթարիոն , եւ զԱնգեղոս Բէլլիւէլոն որք ձեռնտու եղեն ինձ ծա-խիւք եւ ընչիւք ․ Դձլ յիշեցէք 'ի Քս զՏարանացի մահտեսի Ածատուրն որ օգնութի տուար ինձ 'ի տպագրելն, այլ եւ զօրինակն շնորհեաց ինձ զոր տր տծն մեր տացէ զփոխարէնն աստ եւ 'ի հանդերձեալն ամէն ։

Կատարեցաւ գիրք Բ նախ սաղմոս , եւ ապայ Յս որդի ․ 'ի տպա-գրատունն Սալիգաթաուս ։

Ծանօթ. —Մատեանս է փոքրիկ ութածալ . ունի ՇԻԾ էջք ։
Մեր ձեռքը անցած օրինակն անթերի էր ։

—

1645
## ԹՈՒԱԿԱՆԻՆ ՏՊԱԳՐԵԱԼՔ

1. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՅԼՆ.—(Հայ-Լատին). (Կղեմէս Գալանոսի .)
(Տպագրեալ ի Հռովմ , ի Տպարանի Ուրբանեան )

Ճակատը.—«Քերական ․ եւ տրամաբանական ներածութի առ յի-մաստասիրութիւնն շահելոյ ։ Grammaticae, et Logicae Iustitutiones Linguae Literalıs Armenicae Armenis traditae. Ad, *Clemente Calano.* Clerico Regulari Sacra The Iogie Professore ․․․ եւն ։ ROMAE. Ex typo-gpaphia Sacra Congreg. de propaganda Fide. M. DC. XLV. SUPERIORUM PERMISSU ։» Մասնենիս Բ. եւ Գ. բերբերում վրայ նե-րեւեալ վկայականն կան․—

Առաջինը . — «Ընկալ ո՛վ գերաբարձր որ իշխանդ եկեղեցւոյ տէր Գարտինալ Անտոն . արփիափայլ գագաթդ ուրբաղան հանդիսի մեծին Հռ-ովմայ՝ զգիրքս այս Քերականութե , եւ Լօճիգայիս , 'ի մեր լեզուս արտագրեալ ի խնդրոյ իմոյ 'ի կարգէ Թէադինեաց պատուական պատրի Կղեմէս ածաբան վրդպտէ ։ Զի զշնորհաառնութիւնս եւ Յի Քի նուաստ ծառայ Յոհաննէս վարդապետս հայոց Նզեռացի , եւ Արքեպիսկոպոս Մրջաղեսաց՝ ջերմեռանդ սիրով մատուցանեմ , վեհագոյն բարձրու-թեանդ քում, ով զի ընդ արքայաշուք հովանեաւ վեհանձնութիդ ըն-կալեալ՝ համարեացի այդր արժանի տպագրութե , եւ օգտակար եղիցի խնկամատութէ ազգիս մերոյ , 'ի փառս քի ։ ողջ լեր իտր ։ Գրեցաւ ի քա-ղաքս Կոստանդնուպօլսի ։

'ի Թվ փրկչին ՌՈԽԲ. եւ հայոց ՌՂԱ. Յուլիս ԻԹ ։»

( Կնիք )
ՅՀՆՍ ՎՐԴՏ
ԾՌՅ ՅԻ ՔԻ

digitised by A.R.A.R.@

Երկրորդը. —«Ես Խաչատուր վարդապետս Գաղատացի, Պատրիարք հայոց յարքայանիստ Քաղաքիս Կոստանդնուպօլսի, վկայեմ, զի այս Քերականութիւնս, եւ Լօճիգայս, շարադրեալ 'ի հայ լեզուս ի կարգէ Դէատինոսաց Կղեմէս անուան վարդապետէ, 'ի խնդրոյ Յոհաննէսի անուան վրդպտի Եղեսացւոյ, եւ Արքեպիսկոպոսի Միջագետաց աշխարհիս է' զործ ամենեւին անսղալ, որ վայելչաբար եւ ճշմարտապէս ուսուցանէ զմեր լեզուս, եւ զայլ բանս, մինչ զի եւ ես խակ ոչ սակաւս ուսայ սորա ընթերցմամբ։ Նա' եւս լուսաւոր հոգի Կիրակոս վարդապետն որ նախ քան զիս էր Պատրիարք Հայոց Կոստանդնուպօլսի, խիստ հաւանեալ էր գործոյս այսմիկ։ Արդ' առ 'ի վկայութի այս ճշմարտութեան գրեալ եմ զայս, զի յորդորեսցին ի մեծն Հռոմ տպագրել զայսպիսի գործս առ 'ի յօգտութիւն ընթերցողացն մերայնոց։ Ես Խաչատուր Վրդպտ եւ Պտրք Հայոց Կոնդնուպօլսի՝ իմով ձեռամբս գրեցի, եւ կնքեցի ի սոյն քաղաքն Կոստանդնուպօլիս. 'ի Թվ փրկչին. ՌՈԽԲ. եւ Հայոց ՌՂԱ. Յուլիս ԻԴ.» (Կնիք)

ՅԻ ՔԻ. ԾՌ. ԽՉՏՐ. ՎՐԴՊ.
ՊՏՐՔ. ԿՈՍՏՆԴՊԼՍԻ ԹՎ ՌՂԱ.

Երրորդը. — «Ես Պօղոս Վարդպտս Սատամպօլցի, եւ շնորհօքն այ Եպիս հայոց քղքին Տիվրիկոյ, ընթերցայ մտադրութբ՝ զգիրքըս քերականութե. եւ լօճիգային, արտագրեալ ի մեր լեզուս՝ գեղեցկայարմար շարիւ 'ի կարգէ Դէատինեսաց՝ պատուական պատրի Կղէմէս Վրդպտէ, ի խնդրոյ Յոհաննէս անուան վրդպտի Եղեսացւոյ եւ Արքեպիս. ի Միջագետաց, եւ ստուգիւ սահմանեալ եղեւ մեր լեզուն. Եւս առաւել՝ զի բացեալ լինի սովաւ դուռն իմաստութե ազգիս մերոյ 'ի Քս, որք 'ի մեծն հռոմ, զի արժանի տպասցեն զգիրքս՝ զապաւսրութենէ, առ 'ի յօգտակարութիւն կարդացողաց։ Ես Պօղոս Վրդպտ, եւ Եպիս հայոց՝ ձեռամբ իմով գրեցի եւ կնքեցի. ի Կոստանդնուպօլիս, 'ի Թվին փրկչին ՌՈԽԲ. եւ հայոց. ՌՂԱ. Յուլիս ԻՁ...»

(Կնիք) ՅԻ ՔԻ ԾՌՅ. ՏԻՎՐԿԵՑԻ ՊՂՈՍ ՎՐԴՊՏ.

Ծանօթ. — Մատեանս է քառածալ. ունի 15+181=196 թուղթ կամ 392 էջք, Քերականն եւ Լօճիգան եւն. Բառգիրք 27 թուղթ կամ 54 էջք. Ինչպէս այլուր նոյնպէս օրինակ մըն ալ կը գտնուի Կեսարիոյ Ս. Կարապետի Վանուց մատենադարանին մէջ.

Չ. ՍԱՂՄՈՍ. (Ն Տպգր.)

(Տպագրեալ ի Լիվոռնոյ. ի Տպարանի Յովհ. Վ. Ջուղայեցւոյ)

Ծանօթ. — «Գիրք եւ Սաղմոսք Դաւթի, որ եւ սաղմոսարան ասի. Տպագրեալ եղեւ 'ի Հայրապետութեան Հայոց Տէր Փիլիպպոսի Սրբազան Կաթուղիկոսի. հրամանաւ եւ կամօք երջանիկ Խաչատուր վարդապետին Կեսարացւոյ, Ձեռամբ եւ հոգացողութեամբ Նուաստ Յովհաննէս Վարդապետի Ջուղայեցւոյ յիւրում տպարանի, զոր կայացոյց յԻտալիա.

digitised by A.R.A.R.@

ի վայելուչ քաղաքն և ի Նաւահանգիստն ի Լիվոռնոյ   թվին ՌՂԳ. յօժարութեամբ վերակացուաց։»

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ.

Առաջինը.—«Յիսուսի Քրիստոսի ծառայ Յովհաննէս Ջուղայցի, շնորհօքն Աստուծոյ վարդապետ և սպասաւոր սուրբ Էջմիածնի որ 'ի Թ. ՌՁԸ։»

Երկրորդը.—«Առ երջանիկ տէրն իմ Տէր Խաչատուր բարունեաց պետն. ի Նուաստ Յովհաննիսէ Ջուղայցո Բանի Սպասաւորէ։

Որդ ըստ հրամանի և ըստ կամաց սուրբ հօրդ իմոյ մեծի և երջանկագունի, և նախախնամութեան Տեառն որ ի Թվ. ՌՁ և Ը. բաժանեալ ի սուրբ ուխտէդ, գիմեցի յարեւմուտս ասիս լրութեան տպագրութեանս, և ի սպառուածս ամի միոյ, որ ընդ ծով և ընդ ցամաք, հասի յիտալիա, ի գեղազարդ քաղաքն ի Վենետիկ. և վերահասու եղեալ գործառնութեանցս, ընթացայ ի Հռոմ. և անդ սկիզբն արարի նորագոյն գրոց և տպոց, և աւարտեալ մասն ինչ ի գործոյն՝ առի զարհեստաւորս և գիմեցի ի Լիվոռնոյ, և անդ զտեղի կալեալ՝ մեծաւ ջանիւ և բարի գիտաւորութեամբ, զտիւ և գիշեր անդադար աշխատելով՝ լրումն տուաք տպագրութեանս, յերկարելով յաշխատութիւնս՝ բաց ի ճանապարհէն, Գ. ամ և Գ. ամիս, անմխիթար յամենայն կողմանց։ Եւ շնորհօք ամենազօրին Աստուծոյ, և աղօթիւք Տեառնդ իմոյ աւարտեցաք զտպագրութիւնս անթերի և անպակաս կատարելութեամբ. որք են տիպք զանազանք՝ շատ զանազան ոճակութեան և քանակութեան, մեծք և փոքրք՝ ու թիւք արոչեալք, ընդ որոց է և նիւթ երգոց և շարականաց, և այլ գործիք բազումք զարդարիչք տպագրութեանս, որով ամենայն ինչ կարելի է տպել, յորոց բեր միջին կերպ է այս, զոր առաքէ Տէրդ իմ ի ներկայս, զոր իբրև զպտուղ հնազանդութեան՝ մատուցանեմ Տեառնդ իմոյ զերախայրի գործոց, որով կարիցէ Տէրդ ի ճանաչել զկատարելութիւն գործոյս՝ և հաւատարմութիւն ծառայի քոյ զի ոչ կորուսաք զժամանակն մեր ունայնաբար, որպէս կարծեն այլք. Իսկ վասն պակասութեանցն ներեա՝ երկարամտութեամբ. զի իբրև զփորձ տպեցաք զսա յոյժ շտապմամբ, վասն անմխիթար նեղութեանց. Զի յուսուրս Զ աւարտեցաք զսա Ռ և Ծ հատ թուով 'ի միասին, միայն և առանց ուրուք ձեռնատուի. Վասն որոյ ընդունելի լիցին Տեառնդ իմոյ, վասնորոյ ծառայի քոյ, իբրև ընծաւէր անձնանուէր. վասն զի մտեալ որպէս ի պատերազմ, իբրև արեամբ տպեցաք զսա։ Ողջ լեր։ Ի Լիվոռնոյ. Թվ. ՌՂԳ. Մայիս Ժ։»

Երրորդը.—«Շնորհօք ամենազօրին Աստուծոյ արդ կայացաւ տպագրութիւնս. Ձեռամբ Յովհաննէս Վարդապետին։»

Չորրորդը.—«Առ բարեպաշտասէր անձինդ ընթերցողաց, վասն մշտնջենաւոր յիշատակի, շնորհօք ամենազօրին Աստուծոյ և նախախնա-

digitised by A.R.A.R.@

[...]ան Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի ի թուին ՌՉ եւ ի Դեկտեմբեր ամսոյ ի մէկն․ Ես նուաստ ծառայ Յիսուսի Քրիստոսի Յովհաննէս Ջուղայցի՝ Սպասաւոր Բանի․ հրամանաւ երջանիկ հոգեւոր հօրն իմոյ Խաչատուր վարդապետին Կեսարացւոյ․ եկեալ ի Սպահանու քինեցի յարեւմուտս յերկիրն Իտալացոց՝ սակս լրման եւ կատարելութեան գործոյ տպագրութեանս․ զոր արդէն եւս ձեռնարկեալ էաք․ Զի սպառուածս տառւոյ միոյ հասեալ ի պայծառ եւ ի գեղազարդ քաղաքըն եւ Նաւահանգիստն ի Վենետիկ, ուր ընթացեալ ի տպարանս գրոց աղուամ ջանիւք հոգ տարեալ վերահասու եղէ գործառնութեանս, եւ լաւն տեսեալ պակասութեան մերոյ տպագրութեան, ի մտի եղի եւ խորհեցայ նորագոյն գիրս եւ տիպս կայացուցանել որպէս զի եւս գեղեցկագոյնք լիցին գործք տպագրութեան մերոյ․ Այլ զի ի Վենետիկ ոչ գոյին արհեստաւորք պատշաճք այսմ գործոյ, դիմեցի ի Հռովմ, ուր սկիզբն արարաք գործառնութեանս, եւ մասն ինչ ի գործոյս անդ ի Հռոոմ աւարտեցաք․ Եւ ապա անտի ընթացաք ի վայելուչ Նաւահանգիստըն ի Լիվոռնայ, ընդ մեզ ածելով եւ զարհեստաւորս, ուր զետեղեալք բազում ջանիւք եւ հոգացողութեամբ զուն գործեալ յաւարտեցաք յառաջարկեալ գործառնութիւնն մեր, ի ցայգ եւ ի ցերեկ մահու չափ աշխատելով՝ միայն եւ տառից ուրուք օգնականի յերկարելով յաշխատութիւնս Գ․ ամ եւ հինգ ամիս ողջոյն․ բաց ի մի ամոյն զոր անցուցաք ի ճանապարհին, զանց առնելով զվէշտս եւ զառապանս՝ զոր յայսքան ժամանակս կրեցաք ի հակառակաօրրացն, եւ յոչ կամօղացն զբարեգոյն գործս որք փոխանակ օժանդակութեանն զոր պարտէին, դիմաբանեալ հակառակէին մշտապար․ բանիւք, գործովք եւ արդեամբք․ եւ զառաջարկեալ գործն մեր խափանել ջանային․ Սակայն Աստուածն Ամենահայեաց՝ ոչ հաճեցաւ ի խորհուրդս նոցա եւ ոչ արար ըստ կամաց նոցա, այլ օգնեաց ինձ աջողմամբ՝ միշտ եւ ամենայն ուրեք, տալով շնորհս առաջի ամենեցուն եւ մեք եւս ոչ դադարէաք եւ ոչ թուլանայաք ի գործառնութեանցս, եւ ոչ ինչ էր փոյթ մեզ հակառակութիւնք նոցա, վասն յուսոյն իմոյ որ առ Աստուած․ այլ ապաւինեալ ի զօրութիւնս տեառն ի կատարումն գործոյս հասանել փութայի, յիշելով զբանն Պօղոսի որ ասէ․ «Եթէ Աստուած ի մեր կոյս իցէ, ո՞վ իցէ մեզ հակառակ», որպէս եւ եղեւն իսկ․ Եւ շնորհօք ամենազօրին Աստուծոյ․ եւ ձեռնտուութեամբ վաճառականաց ոմանց բարեպաշտից, աւարտեալ կատարեցաք զյառաջարկեալ գործ․ տպագրութեանս անթերի եւ յոյժ կատարեալ․ քննութեամբ եւ ոսկութեամբ զանազանեալ, յորոց միոյն եւ իբր միջին կերպ է այս զոր տեսանէք յառաջիկայդ․ Զոր յաջողս տեսութեան եւ փորձառութեան գործոյս ապեցաք [illegible]նս եւ աւարտեցաք զսա յամին որ ի ծննդենէն Քրիստոսի ՌՃ եւ Դ․ ի հայրապետութեան հայոց Տէր Փիլիպպոսի Սրբազան Կաթողիկոսի․

digitised by A.R.A.R.@

ւ ի թագաւորութեան Պարսից Փոքր Շահ Աբասին նորընծայ թագա-ւորին, եւ ի թվին որ ըստ Հայոց ՌՂ եւ Գ. ի Մայիսի ամսոյ ի տասն, ի Լիվոռնոյ, ի յիշատակ մշանջենաւոր եւ ի փառս Քրիստոսի։ —Արդ եթէ հաճոյ թուեսցի բարեպաշտութեան ձերում շնորհք Տեառն է, ըղ-Տեառնէ գոհացարուք, եւ եթէ ոչ՝ ներեցէք իմում տկարութեանս, եւ երկայնամիտ լերուք ընդ գործանութիւնս, զի իբրեւ փորձ տպեցաք զսա անհոգաբար եւ յոյժ շտապմամբ սակս բազում նեղութեանց եւ անմխիթարութեանց, զոր կրէի մինչ վասն միայնութեան եւ պան-դխտութեան իմոյ։ —Վասն որոյ աղաչեմ զձեզ զամենեսեան որ հանդ(ի-պ)իք սմա, ստանալով զսա, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր, ըզ-վերոյասացեալ զերջանիկ զՄաչատուր վարդապետն. եւ զձեռնտու բա-րեպաշտաէր վաճառականսն. եւ զիս զնուաստ զՅովհաննէս Ջուղացի տպասաւոր բանի, որ բազում աշխատանօք յայտաբերեցի զտիպս եւ զտպագրութիւնս. եւ զբարեպաշտ ծնողս իմ, զհայրն իմ զհանգուց-եալ մահդասի Ողիզարն, եւ զմայրն իմ զԱնամէլիքն, եւ զամենայն ար-եան մերձաւորս իմ զհոգեւորս եւ զմարմնաւորս, զկենդանիս եւ զհան-գուցեալս. որպէս զի եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։ Հայր մեր։ Վերջն է գրոյս։

—

1647

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՏՊԱԳՐԵԱԼ

1. ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ ԱԶԱՐԻԱՑԻ.

(Տպագրեալ ի Ջուղայ. ի Տպարանի Յովհ. Վ. Ջուղայեցւոյ.)

Ծանօթ.— Ա. Երիցեան կ'ըսէ թէ Նոր Ջուղայու Ամենափրկիչ վանուց միաբան Յովհաննէս վարդապետ Ջուղայեցի Լիվոռնայէն վերադառնալով Նոր Ջուղայի մէջ տպագրեց «Պարզատումար Ազարիայի» 1647 թուականին։

ԿԱ.ՊԵՏ

---

# ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

## ՊԱՍՄԱՃԵԱՆ ԳՐԻԳՈՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ

—

Ի ՌՄԺԳ (=1764) Թուականի հայոց եւ ի Սեպտեմբերի ամսոյ ԻԹ-ին, Իզմիրու առաջնորդ Աստապատցի Աբրահամ վարդապետն, վասն

digitised by A.R.A.R.@